22 DEC 2017

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՍՈՑԱԼԻԶՄՈՂԿՈՄԻՍԻ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ վորոշում-
ներից

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿՈՇԱԿՈՒՄՆԵՐԻ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Ս. ԱՐԻ Վ
ԳՐԱՊԱԼ

ՅԵՐԵՎԱՆ 1934

Լուսանկարի տեղը

1-3392 գր

ԳՐՔՈՒՅԿ № .....

Ազգանուն .....

Անուն .....

Հայրանուն .....

Գրքույկի տիրոջ
ստորագրությունը .....

Վար հիմնարկությունից
է տրված .....

Ստորագրություն պետական. ապահովության
վարչության պետի .....

«.....» ..... 193 թ.

Ցերեվան

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. 22/IV, կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1934 թ. 25–I և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. 17/V վորոշումներից անհատական թոշակառուների արտոնությունների մասին:

Հոդ. 1. Անհատական թոշակ և միանվագ նպաստ ստանալու իրավունքը սահմանվում է հեղափոխական, զինվորական, պրոֆեսիոնալ ու հասարակական գործունեության և

խորհրդային շինարարության, նաև գիտության, արվեստի ու տեխնիկայի ասպարեզներում Հանրապետությանը բացառիկ ծառայություն մատուցելու համար։

Հոդ. 20 ա. Միանվագ նպաստ տրվում է անհատական թոշակառուներին յուրաքանչյուր տարի նրանց միամսյա թոշակի չափով վերջինների կողմից ցանկացած ժամկետներին։ Բացի այդ, առանձին կարիքի դեպքերում, անհատական թոշակառուներին տրվում է միանվագ նպաստ թոշակ նշանակող հանձնաժողովի առաձին որոշման համաձայն։ Միանվագ նպաստը չի կարող գերազանցել անհատական թոշակի առավելագույն չափը։

Հոդ. 25. Անհատական թոշակառուներից բնակարանավարձ գանձելիս նկատի է առնվում նրանց անհատական թոշակը և աշխատավարձը, եթե նրանք աշխատում են, իսկ պատահական (վոչ սիստեմատիկ) եկամուտը հաշվի չի առնվում։

Եթե անհատական թոշակառուի հետ ապրող ընտանիքի անդամներից վորևե մեկն ավելի աշխատավարձ է ստանում, քան թոշակառուի թոշակն ու աշխատավարձը, ապա բնակարանավարձը գանձվում է ընտանիքում ամենաբարձր աշխատավարձ ստացողի եկամտից 50% գեղջով։ Կենտրոնական ջեռուցման վարձը ևս նույն կարգով է գանձվում։

Մինչև թոշակ ստանալը անհատական թոշակառուի և նրա ընտանիքի զբաղեցրած բնակելի տարածության ավելցուկը և լրացուցիչ տարածությունը մնում են թոշակառուի տրամադրության տակ թոշակ ստանալու ամբողջ ժամանակի ընթացքում։

Բնակելի լրացուցիչ տարածության համար, անկախ նրա տարածությունից, թոշակառուները վճարում են որդինար չափով։

Թոշակառուի մահից հետո այդ արտոնությունը տարածվում է նրա ընտանիքի անդամների վրա, յեթե վերջինին իրավունք է վերապահվում ստանալու անհատական թոշակ կամ ոգտվելու մեռած թոշակառուի արտոնություններով:

26. Անհատական թոշակառուներն իրենց զբաղեցրած բնակարանից կարող են վտարվել (կամ տեղափոխվել) միայն դատարանի վճռով և այն էլ տրամադրելով նրանց՝ բնակության համար ազատ բնակարան, տարածությամբ վոչ պակաս նրանց զբաղեցրածից, նաև տրամադրելով փոխադրության միջոցներ:

27. Անհատական կենսաթոշակները ազատվում են բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից: Յեթե անհատական թոշակառուն կենսաթոշակից բացի ունի այլ յեկամուտներ ու դատումներ, այդ դեպքում հարկվում են միայն այդ յեկամուտները կամ

դատումները, յեթե դերազանցվում են հարկվող մինիմումից, իսկ անհատական կենսաթոշակը հարկվող յեկամուտի մեջ չի մտնում:

28. Բացի այդ, անհատական թոշակառուները տեղական հարկերի նը կատմամբ վայելում են հետևյալ արտոնությունները՝

ա) շինությունների հարկից ազատվում են անհատական թոշակառուներին պատկանող շենքերը, յեթե այդ շենքերը զբաղեցրել են անմիջականորեն իրենք թոշակառուները, նրանց ընտանիքները և չեն շահագործվում վարձակալության միջոցով.

բ) փոխադրական միջոցների հարկից ազատվում են անհատական թոշակառուներին պատկանող փոխադրական միջոցները (ձիերը, հեծանիվները և այլն), յեթե հատկապես թոշակառուներին ու նրանց ընտանիքներին են սպասարկում:

գ) անասունների հարկից ազատ-

վում են անհատական թոշակառուներին պատկանող և անհատական թոշակառուների ու նրանց ընտանիքների կարիքների համար ոգտագործվող անասունները:

29. Անհատական թոշակառուները վայելում են ձրիաբար և հերթից դուրս ամեն տեսակ բժշկական, դեղորայքով և պրոտեզներով ոգնություն ստանալու իրավունք, իսկ նրանց ընտանիքի անդամները՝ ապահովագրված բանվորների հետ հավասար հիմունքներով:

Սանատորա-կուրորտային ոգնության նկատմամբ անհատական թոշակառուները հավասարեցվում են բանվորներին: Բացի դրանից, այդ անձինք կարող են հանձնաժողովների կողմից կուրորտներ և սանատորիաներ ուղարկվել ի հաշիվ Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի միջոցների, վոր

բաց է թողնվում անհատական կենսաթոշակներ վճարելու համար:

30. Անհատական թոշակառուներն իրավունք ունեն հերթից դուրս ընդունվել սոցիալական ապահովության հիմնարկներում (հաշմանդամների տներ և այլն) և Առժողկոմատի հիմնարկություններում) խրոնիկների, տրավմատիկների տներ, նյարդային և հոգեկան հիվանդների համար հատուկ հիմնարկություններ և այլն, իսկ նրանց ընտանիքի անդամներն ընդունվում են նույն հիմնարկություններում ապահովագրված բանվորների հետ հավասար հիմունքներով:

31. Անհատական թոշակառուների դավակները և նրանց խնամքի տակ ապրող անձինք ուսումնական բոլոր (ստորին, միջին և բարձրագույն) հիմնարկներում և կրթական դաստիարակչական հիմնարկներում (մանկատներ և այլն) ընդունվում են

հերթից դուրս և յեղած տեղերի ու թոչակների նկատմամբ զերազանցում են մյուս բոլոր թեկնածուներից և ազատվում են ուսման վճարից։ Նույն արտոնությունները տրվում են անհատական թոչակառուներին ամեն տեսակի դասընթացներ, բանվորական ֆակուլտետներ, տեխնիկումներ, բարձրագույն կամ մասնագիտական ուսումնական հիմնարկներ մտնելիս։

32. Անհատական թոչակառուներն իրավունք ունեն անդամագրվել ՀՍՍՀ բոլոր կոոպերատիվ կազմակերպություններին անխտիր։ Կոոպերատիվ կազմակերպության մեջ մտնելիս նրանք փայավճար և անդամավճար են մուծում տվյալ կոոպերատիվում սահմանված նվազագույն չափով. բացի այդ, նրանք ոգտվում են սպառողական և տնտեսական կարիքները ամբողջ կոոպերատիվ ցանցի կողմից սպասարկելու իրավունքից կոոպերատիվի անդամ-բանվորների հետ հավասար չափով։

Անհատական թոչակառուները կոլտնտեսությունների մեջ մտնելիս ոգտվում են չքավոր տնտեսությունների համար սահմանված արտոնություններով։

33. Անհատական թոչակառուների համար այս կանոնադրությամբ սահմանված բոլոր արտոնությունները տարածվում են նաև ՀՍՍՀ սահմաններում ապրող այն անձանց վրա, որոնք ԽՍՀՄ և ԱՍՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների որոշումների հիման վրա անհատական կենսաթոչակ են ստանում։

34. Սոցիալական ապահովության մարմինները պարտավոր են անհատական թոչակառուների նկատմամբ առանձին ուշադրություն և խնամք ցուցաբերել, մասնավորապես ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի որենքով նրանց տրված բոլոր արտա-

նութիւններն ու առավելութիւնները ապահովված լինեն և պատշաճ դեպքերում այս կանոնադրութիւնը խախտող անձինք յենթարկվեն պատասխանատվության։

Հոդ. 34 ա. Անհատական թոշակառուները և նրանց ընտանիքի անդամները կոմունալ սպասարկումների, այն է՝ բնակարանի, ջրի, կոյուղու, լուսավորության, քաղաքային լվացքատների, հասարակական բաղնիքների, դուշերի, տրամվայի և ավտոբուսի վարձը վճարում են բանվորների ու ծառայողների համար սահմանված դրույքների 50% չափով։

Քաղաքային բաղնիքներից, լվացքատներից և դուշերից անհատական թոշակառուները ու նրանց ընտանիքի անդամները ոգտվում են հերթից դուրս։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Տեղական խորհուրդները կարող են բոլորովին ազատել թոշակառուներին բոլոր կոմունալ սպասարկումների կամ նրանցից մի քանիսի համար վճարելու պարտականութիւններից։

Կոմունալ սպասարկումներից ոգտվելու և կոմունալ ձեռնարկումների հետ փոխադարձ հաշվարկումների կարգը սահմանում են քաղխորհուրդները ու շրջգործկոմները, յելնելով տեղական պայմաններից։

Հոդ. 34 բ. Անհատական թոշակառուներն իրավունք ունեն առանց վճարի հաճախելու բոլոր պետական թանգարանները, ցուցահանդեսները, այգիները և նման կուլտուրական հիմնարկութիւնները։ Կինո կամ թատրոն հաճախելիս անհատական թոշակառուները վճարում են տոմսի արժեքի 50%։

Գլավլիտ 366, պատ. 986, տիրաժ 500
Գեհրատի տպարան

10

ՀՀ Ազգային գրադարան
NL0404562

1
3392